


Գանձակեցին, և ունին տարբերութիւններ հէնց այն շրջանակի մէջ, որ տալիս են մեր երկու հնագոյն հեղինակները. այդ մի ապացոյց է, որ եղել է սկզբնական մի աղբիւր աւելի հին, քան Կաղանկատուացին է, որից և օգտուել է Մխիթարը: Նա և Օրբէլեանը գիտեն, որ Ստեփանոս Դուինի աւագերէցի որդին է, իսկ Կաղանկատուացին և նորա հետ Գանձակեցին լուսմ են. ապա Ստեփանոսի մահուան մասին սրանք կարճ խօսք ունին միայն, լստ Կաղանկատուացու, « թէ ի պիղծ կանանց եղև մահ նորա », կամ ըստ Գանձակեցու՝ « ըսպանեալ եղև ի պոռնիկ կանանց », մինչդեռ Մխիթարն ու Օրբէլեանը տալիս են մանրամասնութիւններ մահուան, յուզարկաւորութեան և թաղման մասին. ապա Մխիթարը յայտնում է, որ Աբկազան սենեակը, ուր հանգչեցնում են առաջին անգամ Սիւնեցու մարմինը, շինուած էր « յանուն հզօր զինուորին Քրիստոսի սրբոյն Քրիստափորի », և ըստ Օրբէլեանի « յանուն սրբոյն Քրիստափորի սնյաղթ զօրավարին », որ չունին Կաղանկատուացին և Գանձակեցին:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՅՈՎՍԷՓԵԱՆՅ

Շարունակելի



**ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՕՍԳ**

Այս կեանքին մեզի հետ կը սակիւն միայն այն կասարեւոյթիւնը, զոր տուած ենք մեր հոգւոյն. և ուրիշ բան չենք բողոք երկրի վրայ, բայց երբ մեր գործած բարիքը:

\*

Ուրազակուն պիտի և խաղաղիկ ինչ որ ցնկելի և, այս նորս իրաւունքն և. հաւասարողը պիտի և հաւասար, ինչ որ անցնելի և, այս և՛ սորս իրաւունքն և:

\*

Անհնարին բաներու փափաքիլը դիտին և:

**ՀԱՅԵՐԷՆԻ ՀԱՐՑԵՐ<sup>(\*)</sup>**

(Հ. Ա. Ղազիկեանի ՄԻՒ ԳՐԷՔ . . .  
ԳՐԵՑԷՔ . . . ին առքիւ)

7. Ռսերհն, քրեհհն. — Հ. Ա. Ղ. կ'ըսէ թէ ասոնց ուն յապաւելու չէ, քանի որ « Ու ձայնը շատ կը սիրէ հայ լեզուն և այնպէս կը պահէ առանց ըթի փոխելու, մանաւանդ առաջին վանկինը»: Իրաւ որ այս նորօրինակ ու տարօրինակ կանոնը անձանօթ էր մինչև հիմակ. հայերէնի նոյն իսկ վերիվերոյ քննութիւն մը շատ դուրաւ պիտի հերքէ այդպիսի օրէնքի մը կարծեցեալ գոյութիւնը: Ա. օրինակ՝ ապուր՝ ապրանք, աշուճ՝ աշնային, բուռն՝ բոնի, բութ՝ բթանալ, բուրդ՝ բրդեայ, բուխ՝ բըխիլ, բուն՝ բնիկ, բնութիւն՝ բնական, բուտ՝ բտկան, բուք՝ բքարեր, գուր՝ գրացի, գութ՝ գթասիրտ, գուլ՝ գլանալ, գըլուխ՝ գլխաւոր, գուճ՝ գճիլ, գուուզ՝ գըուզարուրդ, ունդ՝ ընդեղէն, ունչ՝ ընչացք, դրուժ՝ դրժել, դուլ՝ դլալ, դուո՝ դրացի, դուքս՝ դքսութիւն, դգում՝ դգմնի, դուրս դրսեցի, և այնպէս՝ կղբազգի, լրադիր, խնկնի, մրտեղ, նոնենի, ծնրակապ, կըղաքիս, նրբութիւն, շնչաւոր, պտիկ, մանկիկ, ջրարբի, ոնգային, սրբարան, առտնին, ցնցել, փլչիլ, ըղտափուշ, ըմպելի, քնանալ, դրբան, սրբան, զրկանք, թըլփիկ, թնդալ, թրմել, թրջել, և այլն ևւայլն ևայլն որոնցմէ ու ինկած է. խնայինք թերթին սիւնակներուն և ընթերցողին համբերութեանը:

Բ. Իր այդ թիւր եզրակացման համար Հ. Ա. Ղ. մի քանի օրինակներու տըւած է իր կոնսիլը՝ թէ սովոր ենք գրել՝ սուղել, սուղասական, բուրգեր, կուռքեր, բլուրներ, փետուրներ, ժողովուրդներ, կըցուրդներ, տուրքեր, շշուջներ, և ոչ թէ՝ բրգեր, տրքեր, կոքեր, բլրներ, փետրներ, ժողովրդներ, կցրդներ, շշնջներ: Ի՞նչոյ այս մի քանի օրինակներն իսկ դեռ իր ըսածը չեն հաստատեր, քանզի ունինք նաև՝ թուրքեր՝ բայց և թրքավայել, թրքասէր, թրքուհի, թրքական, թրքատեսց. սոււ-

(\*) Տե՛ս ՍԻՈՆ 1931 Յունվար, էջ 21

ղեկ՝ բայց և սղական, սղարար, սղագոյն, սղակի, սղել. բուրդեր՝ բրգածե, բրգանման. կուսքեր՝ կուսպաշա, կուսաուն, բլուրներ՝ բլրածե, բլրակ, բլրացի բլրարար. փետուրներ՝ փետրատել, փետրիկ, փետրածե. ժողովուրդներ՝ ժողովրդական, ժողովրդապետ. կցուրդներ՝ կցրդասաց, տուրքեր՝ արասէր, շշունջներ՝ շշնջել, շշշնջիւն: Գ. Իր ենթադրական կանոնին հիմ կազմած է նաև գունդազունդ բառը: Սակայն պէտք է նկատել թէ այս բառը կրկնածե մ'է. իսկ կրկնածեին նպատակն է ուժգնութիւն արտայայտել. եթէ զընդադունդ, խժողով գրենք՝ բառին կրկնածեութեան երևոյթը կը խաթարի քիչ մը, որով իմաստին ուժգնութիւնը կը տուժէ: Զեականորէն՝ գունդազունդը աւելի բազմութիւն կը ցուցնէ քան գնդազունդը, և խուժուժը՝ աւելի անդթութիւն քան խոժուժը: Դ. Իր տուած օրինակներէն ոմանք ալ ուն պահած են ոչ թէ զայն սրբելուն համար, այլ որպէսզի բառը աւելի զիրար կարգալի բլլայ և աւելի ճաշակաւոր ելեւոյթ մը ունենայ: Ժողովրդներ, սննդներ, բլլներ, շշնջներ բառերը 4-5 բաղաձայնէ բաղկացեալ կուտակներ ունին, երեք վանկի մէջ միայն մէկ բաղաձայնով յաճախ իսկ այս տեղի է իր երևոյթով իսկ. յայտնի է որ սասնց ընթերցումն ալ աւելի՛ զըժուար է: Ե. Իր տուած օրինակներէն ոմանք ալ ուով կը գրուին պարզապէս երկզիմութեան առաջքը առնելու համար. — խուժանը ամբոխն է, իսկ խժանը՝ խժալուձայնը հանողն է. սուտակը և սուտակասպասը անշուշտ ուով պէտք է գրել, եթէ ոչ՝ կ'ըլլան . . . տակ, ստակոսպաս: Զ. Մի քանի օրինակներն ալ եթէ առանց ուի գրուին սխալ ընթերցում պիտի պատճառեն. ստանուն, ստամետուկ, ստերգմութիւն և ստապատում ձևերը հաւանաբար, առանց ուի, պիտի կարգացուէին ստանալ, ստանձնել, ստիպել, ստուգել բառերուն պէս, և ոչ թէ սըտանուն, սըտամետուկ և այլն: Այս բոլորէն կը տեսնուի թէ հայ լեզուն պատճառ ժը չունի ու ձայնը բացառիկ սիրով մը սրբելու, և թէ ուետեմ, սրբեմն ձևերը սխալ չեն:

8. Բրաւուս. — Հ. Ա. Ղ. կ'ուզէ այս բառը՝ բութամատ, բոյթ բառէն, որուն ոյն չի կորսուիր այլ ուի կը փոխուի ըստ

կանոնի: Սակայն իմ կարծիքով բթամատ ձևը սխալ չէ, քանի որ իր իմաստով բութ բառին հետ ալ աւնշակից համարել կարելի է, նկատի ունենալով որ բոյթը ամենէն բութն է մատերուն մէջ: Ատիկէ զատ հայերէնը ոյ-ի կորուսման, կամ ըթի փոխման օրինակներ ունի. — բոյժ՝ բժիշկ, բոյն՝ բնակ, սոյր՝ սրանալ, սրովար. պտոյտ՝ պտտիլ, խոյզ՝ խուզել՝ խզել, պոյտ՝ պտուկ: Ուրեմն շատ շտեմանք երբ բոյթն ալ բթամատ կ'ըլլայ, ինչ որ թէ աւելի կարճ է, և թէ արդէն գործածական է:

9. Սելր. — Հ. Ա. Ղ. կ'ուզէ որ Սելր գրենք այս օտար անունը, քանի որ հայերէն պարզ բառերուն սկիզբը կամ վերջը վ կրնայ գտնուիլ, բայց մէջը՝ երբեք: Սակայն, նա հակասութեան մէջ կ'իյնայ հոս. քանզի այս բառը արդէն հայ բառ չէ: Ատիկէ զատ բառամիջի եւ-ը որուն բաղաձայն կը յաջորդէ՝ համազօր է եօ-ի. — եթն՝ եօթն, արդեք՝ արդեօք, մեք՝ մեօք: Հետեւբար Սելրն ալ . . . Սեօ՞ր պիտի կըրնանք կարգալ: Կը տեսնենք թէ օտար (և ոչ թէ հայ) բառերուն մէջ լաւագոյն եւ ապահով կերպն է վ գրել և ոչ թէ լ, ինչպէս արդէն թելագրած է Le Foyer թերթը:

10. Լարիվ, Տըլարիվ. — Հ. Ա. Ղ. կը պահանջէ որ օտար բառերու iver իւ գրենք, իսկ ue ն ալ ու. Larive՝ Լարիւ, Declarue՝ Տըլարու: Մինչև հիմա տեսանք որ անոր գրապէս թելագրածները սխալ չէին, միայն թէ բացասածներն ալ սխալ չէին, և զանոնք զատապարտելու իրաւունք չունէր: Սակայն այս մի քանի օտար յատուկ անուններուն համար իր ըրած թէ՛ բացասումները սխալ են և թէ՛ գրապէս թելագրածները: Այս ինչ արատոց բաներ կ'առաջարկէ. Riviera գաւառը Բիւիէրա գրելու է եղեր, Rivesaltes քաղաքը՝ Բիւզալթ, Rive աւանը՝ Բիւ, Rive De Gier քաղաքը՝ Բիւ Տը Ժիէ, Rivoli գիւղը՝ Բիւլի, Rivarol անձը՝ Բիւարոլ:

Իսկ միւս կողմէն ալ Rue աւանը Բու պէտք է գրենք եղեր, François Rude՝ Ֆրանսուա Բուտ, Ruelle աւանը՝ Բուէլ, Ruines գիւղը՝ Բուին, և այլն:

Հ. Ա. Ղ. այս անճշգրտութիւններն ու շփոթութիւնները կը փաթթէ հայ ժողովրդին, մանաւանդ նորուաներու գլխուն, ըսենք հայ լեզուի ձիւտին, և ինքնագոհու-

Թևոն կակուլիկ բարձին վրայ կը հանգըստանայ, պատգամելով թէ «երբ Ֆրանսերէն կը խօսիք հնչեցէք Ֆրանսական հընչումով. բայց երբ հայերէն կը գրէք գրեցէք մեր հնչումով. մի՛ ֆրէնկանաք»: Եւ ակտէք թէ այս ձեքածուս պատգամը ուրե՛ր պիտի տանի. վաղը ուրիշ մ'ալ պիտ' ելլէ բսէ թէ հայերէն ակէ բասի սկիզբը Սթր կուսակը չունինք, ուստի մի գրէք Սթրագպուրկ, այլ Սրագպուրկ կամ Թրագպուրկ. երբ հայերէն կը գրէք գրեցէք մեր հնչումով: Ուրիշ մ'ալ պիտի առաջարկէ գրել Հոուրէն, Հոսթերամ, Հոանկուն, Հալուսարտ Քիփիինկ, Հոսպնսոն, Հըսուսմանիա, Հոասին, Հոասլլէ, Հոսմսէյ Մաքտոնալտ, Հոաֆայէլ, Հոէյմոն Փուանքարէ, Հոլիֆ (Նիլը Իոթ), Հոակալ, Հըսիլսթեր, Հոթո տը Եանէյրօ, Էայլն Էայլն. պարզապէս անոր համար որ հիները իրենց գանդաղ հնչումով մեզի կտակած են Հոովմ, Հոուփանոս, Հոագամիզզ, Էայլն ձեերը:

Ուրիշ մ'ալ իրաւունք պիտ' ունենայ ըսելու թէ՛ քանի որ բուն հայ բառերուն մէջ ի՞նչ հինչը չունինք, ուրեմն ա՛լ հայ տառերով մի գրէք Էօտէմիշ, Վերտէօն, Փէօփըլ (Թերթըլ), Քէօնիկպերկ, Մէօզ, Ռիշլիէօ, Էայլն: Եւ կամ ո՞ով գրեցէք դանք — Փոփլ, Մոզ Էայլն:

Ահա թէ ուրե՛ր կը տանի այդ ձուս պատգամը որ յստակ ալ չէ. ի՞նչ ըսել է «գրեցէք հայ հնչումով». հնչումով կը գըրենք թէ տառերով. հայերէնը ե՛րբ մեզի իրաւունք տուած է որ օտար բառերու հինչը փոխենք. չէ՞ որ զիրը ծառայ է հինչին և պարտաւոր է զայն հարագատօրէն ներկայել, և ոչ թէ փոխել: Մինչդեռ Հ. Ա. Ղ. կը պահանջէ որ Էօժէն Սիւն Օժէն Սուգրենք, Մոնթեկիւն Մոնթեկու, Ռըքիւն Ռըքու, ալընիւ՛ ալընու Էայլն: Հայերէնի մէջ իւ երկու դեր ունի, ինչ և իմ: Արգ, Հ. Ա. Ղ. փոխանակ այս հարցը լուծելու՝ ուրիշ երկզիմութիւն մըն ալ մէջտեղ կը ձգէ. թէ հայերէն ու՞ով ներկայելու է Ֆրանսերէնի սե և ou հինչերը:

Առաջարկուած այս թնձուքէն ազատելու կերպն է օտար բառերու մէջ վ գործածել և ոչ թէ ռ: Այս՝ չհակասեր հայերէն հնչադրութեան սկզբունքը, զի օտար բառերուն մէջ է որ կը գործածենք. և կը հագտակէ նոյն՝ հայերէնի սկզբունքը, զի

հայ բառերուն մէջ չէ որ կը գործածենք: Սկզբունք մը իմասանօրէն օգտագործելով կիրարկելու է, և ոչ թէ անիմաստ հետևողութեամբ:

Այս վերոյիշեալ կերպէն զատ կան ուրիշ կրկուք ալ որ այլեւս վէճի ամէն դուս կը գոցեն այս հարցին մասին: Առաջինը՝ վ տառին գործածումն է հայերէնի մէջ ալ բոլոր այն տեղերը ուր բաղաձայն ու կամ ռ կայ (Ասովմ, ալագակ Էայլն): Խորհ. Հայաստան որդեգրած է այս կերպը, և կարծեմ հանգուցեալ Դուրեան Պատրիարքըն ալ առարկելի չէր գտնէր զայդ: Իսկ երկրորդը իմ հնչուող իւր միայն այդ հինչին յատկացնել, իսկ ձայնաւոր իւրին համար ալ նոր նշան մը որդեգրել. օրինակ՝ փօքը գծիկը դէպի ձախ գոցուած ինի մը, կամ աջ թևը կտրուած խաչանիշ մը, որու հորիզոնական գծիկը կրնայ քիչ մը վեր ալ շեղեցուիլ:

Բ. ԹՈՒԼԱՏՐԵԼԻՔ

Վերոյիշեալ սխալներէն զատ անհարկի, ուստի և վնասակար կը գտնեմ Հ. Ա. Ղ. ի կարգ մը պնդումները որոնք հայ լեզուի համար անհրաժեշտ չեն, իսկ հայերէնը նոր սովորոյներուն համար՝ խրատուցիչ են: Հայերէն սովորիլը նուազ տաղտկալից, նուազ խրատուցիչ, և աւելի զիւրին ու սիրելի ընծայելու համար լաւագոյն է, նոյն իսկ անհրաժեշտ է, մեր լեզուէն վտարել մի քանի լեզուական աւելորդ խրթնութիւններ, երբ այդ վտարումը տեղի կ'ունենայ համաձայն՝ լեզուի ոգիին ու լեզուի բարեշրջման երեոյթներուն: Եւ խիստ կարեոր է օր առաջ որոշել այս աւելորդ խրթնութեանց՝ լեզուական կոծիծներուն հատումն ու նետումը, մի քանի պատճառներով. —

1. Ունինք թրքախօս հայոց զանգուած մը որոնք սովորած լինելով սահմանափակ և այդ իսկ պատճառով զիւրին թրքերէնին, որ իրենց մայրենի լեզուն Էղած է, կը դժուարին ու չեն համարձակիր լրջօրէն հայերէն սովորելու ձեռնարկել, և կամ իրենց սովորած հայերէնը գործածել գրատոր կամ բերանացի: Եւ այս անոր համար որ մասնաւորապէս կը գայթիւն մեր լեզուին անկանոն բայերուն և անկանոն հոլովե-

րուն մէջ, ու գրելու ասան ալ ուզողագրութեան մէջ: Նոյնիսկ կան շատ մը մտաւորական և ազգասէր թրքախօս հայեր ալ որոնք հայերէն գիտնալով հանգերձ գայն չեն խօսիր, քանզի ինքնասիրութեան բընազգով իսկ չեն ուզեր խօսիլ ու գրել լեզու մը ուր սխալիլը յաճախ հաւանական է, արդիւնք՝ լեզուին բարդ կանոններուն և բազում բացառութեանց. ս՞ով պիտի ուզէր հարթ ու հանգիստ ճամբան ձգել և և խորտուրորտ ուղիներէ քաշել, ուր սայթաքիլն ու գայթիլը այնքան հաւանական են: Ահա այս թրքախօս հայերուն և մեր լեզուին տարածման սիրոյն պէտք է հայերէնը թեթեւցնել իր ոչ-անհրաժեշտ յաւելուող կանոններէն, և այսպէսով գայն աւելի զիւրացնել ու մատչելի ընել:

2. Այսօր հոս ու հոն ցրուած հայ բեկորներուն նոր սերնդին վաղը կը մտահոգէ մեզ. մամուլն ալ ստէպ կ'անդրադառնայ այս խնդրին: Մեր ազգային քաղաքական ու տնտեսական այս անբազձալի ծանր պայմաններում, և համաշխարհային շուկայի ճգնաժամի այս օրերուն ո՞վ է որ ժամանակ ու տրամադրութիւն պիտ' ունենայ սովրեւու հաց շտուղ լեզու մը՝ հայերէնը: Միւս կողմէ մեծ ազդերու, որոնց մէջ ցըրուած ենք, պետական, մշակութային, գեղարուեստական, ընկերային և տնտեսական պայմանները և կլանող միջավայրը մեր նոր սերունդին՝ ժամանակ, տրամադրութիւն, ճաշակ ու փափաք չեն թողուր իր փոքրիկ գաղութային ակար ազգը ճանչնալ: Արդ՝ թի՛ւ այն տեղերուն համար ուր հայ դպրոց արդէն չկայ, և թէ անոնց համար որ հայ դպրոց ունենալով հանդերձ օտար վայ ժարաններ կը յաճախեն, անյետաճգիլի անհրաժեշտութիւն է հայերէն սովրիլը աւելի մատչելի ու սիրելի դարձնել, մերկացնելով գայն իր աւելորդ խըրթնութիւններէն ու զիւրացնելով:

3. Իսկ հայ դպրոցներուն մէջ ալ ալընբախ է որ հայ ուսանողն ու աշակերտը շատ աւելի ծանրաբեռնուած են քան ազատ ազգերու մատաղ սերունդը: Առնենք, օրինակի համար, Սիւրբոյ հայ գաղութը. հոս հայ նախակրթարանը, ըստ պետական օրէնքի, պէտք է սովրեցնէ արարերէն և ֆրանսերէն. որով հայ փոքրիկը նախակրթարանին մէջ իսկ ստիպուած է երեք

լեզու սովրիլ, հայերէնն ալ հաշուելով: Իսկ եթէ նա թրքախօս է և ամերիկեան-հայ վարժարան մը կը յաճախէ, ստիպուած է սովրիլ նաև անգլերէն. որով իր մայրենի լեզուն եղող թուրքերէնէն գատ չորս լեզու սովրելիք ունի: Բաղդատեցէք հիմակ այս աշակերտը անգլիացի, ամերիկացի կամ ֆրանսացի տարեկից դպրոցականներուն հետ, որոնք իրենց մայրենի լեզուէն գատ ուրիշ լեզու չեն սովրիր. կամ շատ շատ՝ միայն մէկ հատ: Կը նշանակէ թէ հայ աշակերտը, որ ա՛րդէն շատ մը ընտանեկան, բնակարանի և ապրուստի անյարմարութեանց տակ կը ճնշուի և այդ պատճառով ալ իր կորովին և ուշադրութեան մէկ մասը կը սպառէ ու զանազան դուրսի հոգերով միասին դպրոց կուզայ, այդ հայ աշակերտը ստիպուած է դպրոցին մէջ ալ մեծ ուշ և ուժ և ժամանակ վատնել օտար լեզուներու համար. մինչդեռ եթէ այդ ճնշիչ պայմաններուն և ծանրաբեռնումի հարկին տակ չգտնուէր պիտի կրնար իր առողջութեան, զուարթութեան, արհեստին, մշակոյթին, ու հայերէնին աւելի ժամանակ տալ, և աւելի արդիւնաւոր կերպով: Ահա այս բացառիկօրէն ծանրաբեռնեալ հայ զըպրոցականին համար պէտք է, անհրաժեշտութիւն է հայերէնը աւելի սիրելի, աւելի մատչելի և աւելի զիրին ընծայել, ազատելով իր կարգ մը անպէտ խրթնութիւններէն:

4. Հայ ուսուցիչն ալ որ արդէն շատ ծանրաբեռնուած և քիչ վճարուած է, պէտք է ազատել կարգ մը ուղղադրական սրբագրութիւններ ընելէ, զորս կը պարտադրեն կարգ մը բրածոյացած սովորութիւններ: Այսպէսով անպէտ և զուր տեղը վատնելիք իր ուժը խնայելով աւելի տրամադիր կ'ըլլայ էականին ի սպաս դնելու գայն:

Վերջապէս ամէն կարելին ու յարմարը ընկու է որպէսզի հայերէն սովրիլը բեռ մը, նեղութիւն մը չհամարուի, և սովրեցընողին ալ վատնած շունչը ի զուր եղած չըլլայ:

Խ. Պ. ՔԱՐՏԱՇ

Մնացեալը յարողով